ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<31>> Հուլիսի 2019թ. N ՄՈ-317-2019

ք. Արմավիր

<<ԳԵՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ՄՈՒՔՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գևորգ Մուքոյանի 2019 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

որոշում եմ՝

1. <<Գետաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գևորգ Մուքոյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2019 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 26-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գևորգ Մուքոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Գետաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Գետաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ալիսա Հովհաննիսյանին:
3. Գևորգ Մուքոյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվական օգոստոսի 27-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 7/31/2019 11:52:18 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230